

Հաճախակի օգտագործված հապավումներ

ԴՎՔ	Դրամավարկային քաղաքականություն
ԵԿԲ	Եվրոպական Կենտրոնական բանկ
ԿԲ	Կենտրոնական բանկ
ԴՊՀ (ՖՊՀ)	Դաշնային (Ֆեդերալ) պահուստային համակարգ
ՍԳԻ, ԱԱԳ	Սպառողական գների ինդեքս, Արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքս
ՀՆԱ	Համախառն ներքին արդյունք
MoM	Տվյալ ինդեքսը հաշվարկվել է շղթայական հիմքով՝ որպես ցուցանիշի հիմք վերցնելով նախորդ ամսվա նույն ցուցանիշը
YoY	Տվյալ ինդեքսը հաշվարկվել է բազիսային հիմքով՝ որպես ցուցանիշի հիմք վերցնելով նախորդ տարվա նույն ցուցանիշը
QoQ	Տվյալ ինդեքսը հաշվարկվել է շղթայական հիմքով՝ որպես ցուցանիշի հիմք վերցնելով նախորդ եռամսյակի նույն ցուցանիշը
WoW	Որպես ցուցանիշի հիմք վերցվում է նախորդ շաբաթը
K	Հազար, ամերիկյան գրեյաձև
B	Միլիարդ, ամերիկյան գրեյաձև
PMI	Purchasing Managers' Index. ինդեքս է, որ ստացվում է տվյալ ոլորտում ներգրավված մասնագետների շրջանում անցկացված հարցումների հիման վրա, բնութագրում է տվյալ ոլորտում պահանջարկը, գործարար պայմանները, աճի միտումները
Core (բազային)	Ցուցիչ, որը ցույց է տալիս, որ տվյալ ինդեքսը հաշվարկվել է առանց հաշվի առնելու որոշ սեզոնային մեծ տարանջատում ունեցող բաղադրիչներ

Օգտագործված աղբյուրներ

- ՀՀ տնտեսական ցուցանիշների տվյալների համար որպես աղբյուր օգտագործվել են ՀՀ Կենտրոնական Բանկի, Ազգային Վիճակագրական ծառայության, Ֆինանսների նախարարության, Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիայի, Համաշխարհային Բանկի և Արժույթի Միջազգային Հիմնադրամի վիճակագրական բազաները, հրապարակումները և հաշվետվությունները,
- Արտաքին հատվածի տվյալների աղբյուրների համար տրված են բոլոր անհրաժեշտ հղումները

Ռիսկերի մասին նախազգուշացում

Սույն վերլուծական հաշվետվությունը պատրաստված է ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ կողմից և կարող է օգտագործվել միայն որպես ընդհանուր բնույթի տեղեկատվություն: Վերլուծական հաշվետվությունը հիմնված է ներկայումս հասանելի հանրային տեղեկատվության վրա, որը ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն համարում է վստահելի: Սակայն ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն ոչ մի երաշխիք չի կարող տալ, որ այդ տեղեկատվությունը հանդիսանում է լիարժեք և արժանահավատ, և, հետևաբար, այն չպետք է ընկալվի որպես խորհուրդ կամ առաջարկ՝ որևէ արժեթուղթ, օպցիոն, ֆյուչերս կամ ցանկացած այլ ֆինանսական գործիք գնելու կամ վաճառելու վերաբերյալ: ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն ոչ մի պատասխանատվություն չի կրում այն բոլոր ուղղակի, անուղղակի հնարավոր վնասների համար, որոնք առաջացել են սույն հաշվետվության մեջ առկա տեղեկատվության և հետևությունների մասնակի կամ ամբողջական օգտագործման հետևանքով:


Կոնտակտային տվյալներ՝

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ, «Դիլինգային կենտրոն»
ՀՀ, քաղաք Երևան, Պուշկինի 19
Վերլուծաբաններ՝ Թ.Սարգսյան, Ա.Մաթասյան
(010) 591 525, (010) 591 526

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ


- 2017թ սեպտեմբերին ՀՀ տնտեսական ակտիվության ցուցանիշը նախորդ տարվա նույն ամսվա ցուցանիշի նկատմամբ աճել է 2.5%-ով (YoY), իսկ հունվար-սեպտեմբերին 2016թ նույն ժամանակահատվածի նկատմամբ աճը կազմել է 5.1% (YoY):
- Սեպտեմբերին, ինչպես նաև հունվար-սեպտեմբեր ժամանակահատվածում տնտեսական ակտիվության ցուցանիշի աճն ապահովվել է արդյունաբերության (8.3%), առևտրի (14.2%) և ծառայությունների (16.2%) ոլորտներում գրանցված աճի հաշվին (հունվար-սեպտեմբերին համապատասխանաբար 11.9%, 12.5% և 12.8% աճ, YoY):
- Տարվա ընթացքում առաջին անգամ աճ է գրանցել շինարարության ոլորտը. նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ 2017թ սեպտեմբերին շինարարության ծավալներն աճել են 1.3%-ով (YoY):
- Գյուղատնտեսության ոլորտում պահպանվում է անկումային դինամիկան. 2016թ սեպտեմբերյան ցուցանիշի նկատմամբ 2017թ սեպտեմբերին անկումը կազմել է 11.6% (YoY), իսկ 2017թ հունվար-սեպտեմբեր կտրվածքով նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 9.9%:



Գնային միջավայր

- 2017թ սեպտեմբերին օգոստոսի նկատմամբ գրանցված 0.2% գնաճին հոկտեմբերին հաջորդեց 0.8% գնաճ:
- Սննդամթերքի և ոչ ալկոհոլային խմիչքի գները նշված ժամանակահատվածում աճել են 1.3%-ով, ոչ պարենային ապրանքներինը՝ 1.9%-ով, իսկ ծառայությունների ոլորտում գրանցվել է սակագների՝ 0.5% նվազում (MoM):

- 2017թ հոկտեմբերին նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ գնաճը կազմել է 1.2% (YoY), այդ թվում՝ սննդամթերքի և ոչ ակոհոլային խմիչքի գներն աճել են 3.6%-ով, ոչ պարենային ապրանքներինը փոփոխություն չեն կրել, իսկ ծառայությունների սակագները՝ նվազել 0.1%-ով (YoY):
- 2017թ հունվար-հոկտեմբերին 2016թ նույն ժամանակահատվածի նկատմամբ գնաճը կազմել է 0.7% (YoY):





Պետական հատված

- 2017թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին ՀՀ պետական բյուջեի եկամուտները կազմել են 888.4 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճելով մոտ 5% ով կամ 42.4 մլրդ դրամով (պայմանավորված հարկային եկամուտների՝ 6.2% և այլ եկամուտների՝ 7% աճով), իսկ ծախսերը՝ շուրջ 981.2 մլրդ դրամ՝ նվազելով 0.93% ով կամ մոտ 9.2 մլրդ դրամով:
- Տարվա առաջին ինը ամիսների տվյալներով ՀՀ պետական բյուջեի եկամուտների 94.2%-ը ձևավորվել է հարկային եկամուտների և պետական տուրքերի, 5%-ը՝ այլ եկամուտների, 0.8%-ը՝ պաշտոնական դրամաշնորհների հաշվին:
- Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ 2017թ. հունվար- սեպտեմբերին աճ է արձանագրվել բոլոր հարկատեսակների գծով՝ բացառությամբ շահութահարկի (-14.5%): Նշենք, որ հարկային եկամուտներն ու տուրքերը 2017թ. հունվար-սեպտեմբեր ժամանակահատվածում կազմել են մոտ 836.3 մլրդ ՀՀ դրամ՝ 2016թ. նույն ժամանակահատվածի համեմատ աճելով 6.2%-ով:
- Հունվար-սեպտեմբեր ամիսներին հարկային եկամուտների և պետական տուրքերի 32.6%-ն ապահովվել է ավելացված արժեքի հարկի, 6.1%-ն ակցիզային հարկի, 9.9% ը շահութահարկի, 27.9% ը եկամտային հարկից ստացված մուտքերի և 5.9%-ը՝ մաքսատուրքերի հաշվին:
- Նախորդ տարվա հունվար-սեպտեմբեր ժամանակահատվածի 144.4 մլրդ դրամ դեֆիցիտից արդեն 2017թ. նույն ժամանակահատվածում ՀՀ պետական բյուջեի դեֆիցիտը կրճատվել է մինչև 92.77 մլրդ դրամ: Նշենք, որ միայն սեպտեմբեր ամսին բյուջեի եկամուտները կազմել են մոտ 108.7 մլրդ դրամ, իսկ ծախսերը 129.8 մլրդ դրամ, ինչի արդյունքում գրանցվել է բյուջեի՝ մոտ 21.1 մլրդ ՀՀ դրամ դեֆիցիտ:

- 2017թ. օգոստոսին ՀՀ արտաքին պետական պարտքն արդեն հասել էր 5 մլրդ ԱՄՆ դոլարի սահմանը՝ ամսվա վերջի դրությամբ կազմելով մոտ 5.02մլրդ ԱՄՆ դոլար, իսկ սեպտեմբեր ամսին, շարունակելով աճել հասել է մոտ 5.067 մլրդ ԱՄՆ դոլարի:
- Համախառն պետական պարտքը սեպտեմբերին հասել է մոտ 6.31 մլրդ ԱՄՆ դոլարի՝ ամսական կտրվածքով աճելով մոտ 0.7%-ով, տարեկան կտրվածքով՝ մոտ 12.74%-ով, իսկ տարվա սկզբից՝ մոտ 6.2%-ով:
- Նշենք, որ շարունակում է աճել Պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը՝ արդեն սեպտեմբերի վերջի դրությամբ հասնելով 59.4%-ի (2017թ. սեպտեմբերի վերջի դրությամբ ՀՀ համախառն պետական պարտքի մեծությունը՝ 2016թ. ՀՆԱ նկատմամբ):

Արտաքին հատված


- 2017թ սեպտեմբերին ՀՀ արտաքին առևտրաշրջանառության ծավալը կազմել է 578.3 մլն ԱՄՆ դոլար՝ տարեկան կտրվածքով աճելով 23.1%-ով (YoY): Առևտրաշրջանառության կազմում արտահանման ծավալների աճը կազմել է 11.7%՝ հասնելով 180.4 մլն դոլարի, իսկ ներմուծման ծավալներինը՝ 29%-ով՝ մինչև 397.9 մլն ԱՄՆ դոլար (YoY):
- ՀՀ արտաքին առևտրի բացասական հաշվեկշիռն 2016թ սեպտեմբերի ցուցանիշի նկատմամբ 2017թ սեպտեմբերին խորացել է 48.3%-ով:



Դրամական հոսքեր

- Սեպտեմբեր ամսին դրամական միջոցների զուտ ներհոսքը ՀՀ նախորդ տարվա նույն ամսվա ցուցանիշի նկատմամբ արձանագրել է 0.6% (YoY) անկում, այդ թվում՝ ՌԴ-ից ներհոսքն աճել է 13.4%-ով, իսկ ԱՄՆ-ից՝ կրճատվել 129.5%-ով (YoY):
- Նախորդ ամսվա նկատմամբ դրամական միջոցների զուտ ներհոսքը ՀՀ կրճատվել է 32%-ով, այդ թվում՝ ՌԴ-ից՝ 26%-ով, ԱՄՆ-ից՝ 148%-ով:

ՀՀ բանկային համակարգով ֆիզիկական անձանց անունով դրամական միջոցների զուտ ներհոսք, մլն ԱՄՆ դոլար/ աղբյուրը՝ ՀՀ ԿԲ.՝ Արտաքին հատվածի վիճակագրություն/




Ֆինանսական և դրամավարկային հատված

- 2017թ. սեպտեմբերին մոտ 1%-ով (կամ 9.8 մլրդ ՀՀ դրամով) ամսական (MoM) կրճատում է գրանցել ՀՀ փողի բազան: Մասնավորապես, զուտ միջազգային պահուստներն նվազել են մոտ 50.34 մլրդ ՀՀ դրամով, իսկ զուտ ներքին ակտիվներն աճել՝ շուրջ 40.46 մլրդ ՀՀ դրամով:
- 2017թ. սեպտեմբեր ամսին գրանցվել է ՀՀ առևտրային բանկերի կողմից ներգրավվող ավանդների ծավալների կրճատում: Սեպտեմբերին օգոստոս ամսվա համեմատ ավանդների ընդհանուր ծավալները նվազել են մոտ 2.1%-ով՝ կազմելով 2,479.89 մլրդ ՀՀ դրամ: Հարկ է նշել, որ ամսական (MoM) կտրվածքով ՀՀ ռեզիդենտների դրամային ավանդներն ավելացել են մոտ 3.36 մլրդ դրամով, իսկ արտարժույթով ավանդները՝ 4.82 մլրդ դրամով: Ոչ ռեզիդենտների դեպքում ունենք հակառակ պատկերը՝ սեպտեմբերին օգոստոս ամսվա համեմատ գրանցվել է դրամային ավանդների կրճատում՝ մոտ 37.18 մլրդ-ով կամ 26.3%-ով և արտարժույթային ավանդների կրճատում՝ 24.94 մլրդ դրամով կամ 5.4%-ով: Ամսական կտրվածքով ավանդների

ընդհանուր ծավալների նվազումը պայմանավորված է եղել ոչ ռեզիդենտների դրամային և արտարժույթային ավանդների զգալի կրճատմամբ:

- Չնայած ամսական կրճատմանն՝ արդեն նախորդ տարվա սեպտեմբերի համեմատ ավանդների ընդհանուր ծավալներն ավելացել են ավելի քան 17.4%-ով, ընդ որում՝ աճ են գրանցել ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների թե՛ դրամային և թե՛ արտարժույթային ավանդները:



- Սեպտեմբեր ամսվա ընթացքում օգոստոսի համեմատ 0.07%-ով նվազել է նաև առևտրային բանկերի կողմից տրամադրված վարկերի ընդհանուր ծավալը՝ հասնելով մոտ 2,508.78 մլրդ դրամի: Նվազումը պայմանավորված է ոչ ռեզիդենտների դրամային վարկերի շուրջ 41.5% կամ մոտ 43.9 մլրդ դրամով, ինչպես նաև արտարժույթային վարկերի՝ շուրջ 2.3% կամ 3.19 մլրդ դրամով կրճատմամբ: Ռեզիդենտների դրամային և արտարժույթային վարկերն ամսական կտրվածքով ավելացել են համապատասխանաբար 2.1%-ով և 1.9%-ով՝ կազմելով 872.89 մլրդ դրամ և 1,440.64 դրամ: Տարեկան կտրվածքով վարկերի ծավալների փոփոխությունները ներկայացված են աղյուսակ 1.-ում:
- Տրամադրված վարկերի մեջ առավելագույն մասն են կազմել սպառողական վարկերը՝ շուրջ 472.6 մլրդ դրամ (նախորդ ամսվա համեմատ աճը կազմել է մոտ 1.7%):

Աղյուսակ 1. ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին և ոչ ռեզիդենտներին տրամադրված դրամային և արտարժույթային վարկերի ծավալներ, տարեկան (YoY) և ամսական (MoM) փոփոխություններ
2017թ. սեպտեմբեր/ աղբյուրը՝ ՀՀ ԿԲ


	Ռեզիդենտներ			Ոչ ռեզիդենտներ		
	Դրամային	Արտարժույթ.	Դրամային և արտարժույթ.	Դրամային	Արտարժույթ.	Դրամային և արտարժույթ.
2017թ. սպտ. (մլրդ դրամ)	872.89	1,440.64	2,313.52	61.86	133.40	195.25
MoM (%)	2.1%	1.9%	2.0%	-41.5%	-2.3%	-19.4%
YoY (%)	25%	6.2%	12.6%	-1.4%	37.7%	22.3%
MoM(մլրդ դրամ)	17.97	27.4	45.4	-43.9	-3.2	-47.1
YoY(մլրդ դրամ)	175.12	84.5	259.7	-0.9	36.5	35.6

ՀՀ ֆինանսական շուկայի տոկոսադրույքները / 2017թ. / աղբյուրը՝ ՀՀ ԿԲ										
	Հ	Փ	Մ	Ա	Մ	Հ	Հ	Օ	Ս	Հ
Ավանդներ										
Մինչև 1 տարի ժամկետով ¹										
Իրավաբանական անձանցից										
ՀՀ դրամ	5.5	6.8	6.9	9.8	7.5	9.0	7.7	10.0	7.5	8.7
ԱՄՆ դոլար	6.5	4.7	6.8	4.5	3.9	3.6	3.3	3.8	4.6	4.2
Ֆիզիկական անձանցից										
ՀՀ դրամ	11.4	10.9	10.5	10.3	9.6	9.2	9.1	9.2	9.0	8.8
ԱՄՆ դոլար	4.0	4.1	4.0	4.0	3.7	3.8	3.9	3.9	3.8	3.8
1 տարուց ավել ժամկետով										
Իրավաբանական անձանցից										
ՀՀ դրամ	11.7	13.0	10.0	11.2	11.1	12.1	11.0	12.2	11.9	9.4
ԱՄՆ դոլար	6.1	5.8	6.1	6.1	5.3	6.9	6.0	5.0	5.3	4.8
Ֆիզիկական անձանցից										
ՀՀ դրամ	12.4	12.4	12.4	12.4	11.5	11.5	11.1	10.9	10.5	10.3
ԱՄՆ դոլար	5.7	5.4	5.7	5.4	5.3	5.1	5.2	5.1	5.3	5.2
Վարկեր										
Մինչև 1 տարի ժամկետով										
Իրավաբանական անձանց										
ՀՀ դրամ	13.8	13.1	14.2	12.8	12.7	11.0	11.6	12.1	9.8	11.4
ԱՄՆ դոլար	7.0	8.1	8.3	6.9	8.9	8.2	6.8	7.7	7.3	6.7
Ֆիզիկական անձանց ²										
ՀՀ դրամով	20.3	19.6	19.2	18.6	18.6	18.0	-	17.3	17.1	15.6
ԱՄՆ դոլար	14.8	14.5	13.1	13.3	12.8	13.1	13.1	12.3	11.8	11.6
1 տարուց ավել ժամկետով										
Իրավաբանական անձանց										
ՀՀ դրամ	12.5	13.4	12.6	13.9	13.9	12.8	11.4	12.8	12.5	11.2
ԱՄՆ դոլար	9.6	9.5	9.8	8.7	9.5	8.9	8.8	8.8	9.2	8.5
Ֆիզիկական անձանց ²										
ՀՀ դրամով	17.8	17.8	17.5	17.3	17.0	16.4	-	16.1	15.8	15.3
ԱՄՆ դոլար	13.8	13.0	13.0	13.0	12.0	12.6	12.9	12.6	12.0	12.1
Ֆիզիկական անձանց հիփոթեքային վարկեր										
ՀՀ դրամ	11.8	12.8	12.5	12.0	11.7	11.6	11.8	11.8	11.8	11.6
ԱՄՆ դոլար	11.4	11.8	11.8	11.5	10.9	11.5	10.7	10.8	10.5	9.8
Սպառողական վարկեր										
ՀՀ դրամ	-	18.5	18.2	18.0	17.6	17.1	17.2	16.6	16.4	15.6
ԱՄՆ դոլար	14.9	14.0	13.6	13.6	12.6	13.3	-	13.2	12.4	12.7
Պետական կարճաժամկետ պարտատոմսերի եկամտաբերությունը ³	7.5	7.3	6.8	6.8	6.5	6.4	6.2	6.2	6.0	6.0
Պետական միջինժամկետ պարտատոմսերի եկամտաբերությունը ³	10.1	9.8	10.0	8.7	8.7	9.0	8.5	7.9	8.0	8.3
Պետական երկարաժամկետ պարտատոմսերի եկամտաբերությունը ³	-	11.6	13.5	-	10.6	13.6	-	10.0	-	-

¹ Բացառությամբ ցպահանջ ավանդների:

² Ներառում է ֆիզիկական անձանց հիփոթեքային, սպառողական և այլ վարկերի տոկոսադրույքները, ինչպես նաև ֆիզիկական անձ տնտեսավարող սուբյեկտներին տրամադրված վարկերի տոկոսադրույքները:

³ Ներկայացված են առաջնային շուկայում տեղաբաշխված արժեթղթերի միջին կշռված եկամտաբերությունները:



Արժույթային շուկա

Հոկտեմբեր ամսին ԱՄՆ դոլարի փոխարժեքն այլ հիմնական արժույթների նկատմամբ գրանցել է աճողական դինամիկա՝ խթանվելով հատկապես ամսվա վերջին օրերին: Ամսվա առաջին կեսին որոշակի անկումը պայմանավորվել է հատկապես ԱՄՆ Սենատում մեծամասնություն կազմող Հանրապետական կուսակցության ներկայացուցիչների և նախագահ Դ.Թրամփի միջև հակասությունների ի հայտ գալով՝ հաստատվելիք նոր հարկային պլանի իրագործման հնարավորության վերաբերյալ անորոշությունների պատճառ հանդիսանալով: Միջազգային ասպարեզում, Հա. Կորեայի վերաբերյալ Դ.Թրամփի կողմից հնչեցված ռազմատենչ հայտարարություններն, իրենց հերթին, խթան հանդիսացան առավել հուսալի արժույթների, մասնավորապես՝ ճապոնական իենի նկատմամբ պահանջարկի աճի համար՝ զսպելով ԱՄՆ դոլարի դիրքերը:

Ամսվա մյուս հատվածում դոլարի դիրքերի գրեթե անընդմեջ աճողական դինամիկան հատկապես խթանվել է ԱՄՆ ԴՊՀ նոր նախագահի ընտրության հետ կապված սպասումներով: ԴՊՀ ներկայիս նախագահ Զ.Յելլենի պաշտոնավարման ժամկետը լրանում է 2018թ փետրվարին, և առկա հինգ թեկնածուների շարքում առավել հավանական էր համարվում Սթենֆորդի համալսարանի տնտեսագետ Զ.Թեյլորի ընտրությունը, ով հայտնի է դրամավարկային քաղաքականության՝ կանոնի հիման վրա վարելուն իր կողմնակից լինելով: Հայտնի «Թեյլորի կանոնի» համաձայն ԴՎՔ բազային տոկոսադրույքը պետք է շատ ավելի բարձր մակարդակում լինի, քան ներկայումս է (1-1.25%): Հետևաբար, շուկայի մասնակիցների սպասումներն ուղղվեցին առավելապես դեպի տոկոսադրույքների բարձրացման կողմը:

ԱՄՆ դոլարի ինդեքսի աճին նպաստող գործոնների շարքում հատկապես ազդեցիկ խթան հանդիսացավ հոկտեմբերի 20-ին ԱՄՆ Սենատի կողմից 2018թ ֆիսկալ տարվա համար մշակված բյուջեի նախագծի հաստատումը: Դրանով իսկ Հանրապետականների առջև չեզոքացվեց առանց Դեմոկրատների աջակցության հարկերի նվազեցմանն ուղղված ռեֆորմի անցկացման խնդիրը: Ռեֆորմների իրագործման գծով գրանցված առաջընթացը մեծացրեց երկրում ինֆլյացիայի աճի հեռահար սպասումները՝ խթան հանդիսանալով դոլարի փոխարժեքի աճի համար:

Դոլարի ինդեքսի առավել ակնառու՝ շուրջ 2% աճ գրանցվեց հոկտեմբերի 26-ին կայացած ԵԿԲ նիստի արդյունքների ֆոնին: Նիստում որոշում կայացվեց խթանող ԴՎԲ շրջանակներում ԵԿԲ կողմից ակտիվների ամենամսյա գնումների ծավալը 60մլրդ եվրոյից նվազեցնել մինչև 30 մլրդ եվրո ծավալը՝ գնումների իրականացման ժամկետը երկարաձգելով, սակայն, ևս 9 ամսով՝ մինչև 2018թ սեպտեմբեր: Քաղաքականության՝ միևնույն ժամանակ և զսպողական և ընդլայնողական էլեմենտներ պարունակող որոշումից հետևում է, որ ԵԿԲ կողմից ԴՎԲ բազային տոկոսադրույքի (0.0%) բարձրացում չի կատարվի մինչ 2019թ: Իր ելույթում ԵԿԲ նախագահ Մ.Դրագին նշեց, որ ԴՎԲ խթանող գործողությունների կատարումն անհրաժեշտ է պահպանել, քանի դեռ չի դիտվում գնաճի կայուն աճողական դինամիկա: Նշենք, որ օգոստոս-սեպտեմբեր ամիսներին գնաճի մակարդակը տարածաշրջանում պահպանվում է 1.5% (YoY) մակարդակում՝ ԵԿԲ նպատակային 2%-ի (YoY) պարագայում:

ԵԿԲ կողմից խթանող քաղաքականության պահպանման, և տոկոսադրույքների բարձրացման հավանական ժամկետների հետաձգման պայմաններում եվրոյի փոխարժեքն այլ հիմնական արժույթների նկատմամբ կտրուկ անկում գրանցեց: EUR/USD զույգի անկումը հոկտեմբերի 26-27-ին կազմեց է 1.6%՝ 1.1829 դոլար եվրոյի դիմաց արժեքից հասնելով 1.1636 դոլար արժեքին:

ԵԿԲ նիստի արդյունքների, ինչպես նաև անկախացման նպատակով Կատալոնիայի վարած պայքարի ֆոնին տարածաշրջանում տիրող լարված քաղաքական իրադրությունը պատճառ հանդիսացան միասնական արժույթի դիրքերի նվազող դինամիկայի պահպանման համար: EUR/USD զույգը հոկտեմբեր ամսվա ընթացքում և նոյեմբերի առաջին օրերին շուրջ 1.8% անկում գրանցեց՝ 1.1807 դոլար եվրոյի դիմաց միջին արժեքից հասնելով 1.1586 դոլար եվրոյի դիմաց արժեքին:



ԱՄՆ դոլարի դիրքերի մոտ 0.5% անկում գրանցվեց նոյեմբերի 8-9-ին՝ պայմանավորված շուկայի մասնակիցների շրջանում ԱՄՆ նոր հարկային պլանի հաստատման հետ կապված մտահոգությունների աճով: Նոյեմբերի 9-ին հարկային պլանի՝ ԱՄՆ Սենատի կողմից հաստատված նախագիծը տարբերվեց մինչև այդ Ներկայացուցիչների պալատի կողմից հաստատված պլանից: Թեև ըստ երկրորդ տարբերակի նույնպես նախատեսվում է կորպորատիվ հարկի դրույքաչափի նվազեցում ներկայիս 35%-ից մինչև 20%, նախագծի իրականացումը հետաձգվել է մինչև 2019թ: Ըստ Սենատի կողմից հաստատված տարբերակի նախատեսվում է հարկային դրույքաչափի կիրառում ամերիկյան վերազգային կորպորացիաների՝ արտերկրից ստացվող 2.6տրլն ԱՄՆ դոլար ծավալի հասնող շահույթի նկատմամբ, մասնավորապես՝ 12% կանխիկ և առավել իրացվելի և 5% պակաս իրացվելի ակտիվների նկատմամբ: Մինչդեռ Պալատի կողմից առաջարկվում էր համապատասխանաբար 14% և 7% դրույքաչափ: Բացի այդ, Սենատի կողմից առաջարկվող տարբերակը չի ընդգրկում ԱՄՆ առողջապահական ապահովագրության ծրագրի առանցքային բաղադրիչներն անվավեր ճանաչելու մասին դրույթ, ի տարբերություն Պալատի կողմից հաստատված հարկային պլանի:



Հարկային պլանի երկու տարբերակների դեպքում էլ ակնկալվում է 10 տարվա ընթացքում ԱՄՆ բյուջեի դեֆիցիտի և պետական պարտքի ավելացում շուրջ 1.5տրլն ԱՄՆ դոլարով:

Հոկտեմբեր ամսվա կտրվածքով ԱՄՆ դոլարի ինդեքսի աճը կազմեց 1.7% միջինում 92.84 գործակցից մինչև 94.4 գործակիցը:

GBP/USD փոխարժեքի դինամիկա
Հոկտեմբերի առաջին օրերին նախորդ ամսվա վերջերից գրանցվող անկումային միտումը պահպանելուց հետո բրիտանական ֆունտի փոխարժեքն ԱՄՆ դոլարի նկատմամբ ամսվա մնացած հատվածում որոշակի ընդգծված դինամիկա չի գրանցել՝ իր վրա կրելով նոյեմբերի 2-



ին Անգլիայի Բանկի կայանալիք նիստի վերաբերյալ սպասումները: Ամսվա ընթացքում երկրի տնտեսության վերաբերյալ հրապարակված ցուցանիշները ցույց են տվել առավելապես դրական պատկեր՝ 2017թ երրորդ քառորդում ՀՆԱ-ի շուրջ 1.5% տարեկան (YoY) և 0.4% քառորդային (QoQ)

աճով՝ որոնք գերազանցեցին սպասումները: Գնաճը երկրում պահպանվում է 2012թ մայիսից հետո գրանցված առավելագույն մակարդակներում՝ 3% (YoY): Այս ֆոնին նոյեմբերի 2-ի նիստում Անգլիայի Բանկի կողմից որոշում կայացվեց ԴՎՔ բազային տոկոսադրույքը բարձրացնել 0.25 կետով՝ 0.25%-ից հասցնելով 0.5%-ի: Սա վերջին տասնամյակում Բանկի կողմից տոկոսադրույքների առաջին բարձրացումն էր: Միևնույն ժամանակ, սակայն, Բանկի կողմից նշվեց, որ հետագա բարձրացումները լինելու են խիստ սահմանափակ և աստիճանական, քանի որ պահպանվում են Բրեքսիթի հետ կապված ռիսկերը: Այս ֆոնին, տոկոսադրույքի բարձրացումը նոյեմբերի 2-ին հանգեցրեց GBP/USD փոխարժեքի մոտ 2% անկմանը:

Հոկտեմբեր ամսին արժույթային շուկայում ռուսական ռուբլու դիրքերը շարունակեցին անտեսել նավթի շուկայում գրանցվող գնաճը: Վերջինիս պատճառը երկրում արտարժույթի պաշարների կտրուկ կրճատումն է: ՌԴ ԿԲ նախնական գնահատականներով 2017թ հունվար-հոկտեմբերին երկրի վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվի դրական սալը 2016թ նույն ժամանակահատվածի 14.9 մլրդ ԱՄՆ դոլարի հասնող ցուցանիշից ավելացել է մինչև 28.9 մլրդ ԱՄՆ դոլար: Դրական տեղաշարժին նպաստող առանցքային գործոնն առևտրային հաշվեկշռի սալոյի բարելավումն է՝ երկրից արտահանվող ապրանքների համար արտաքին շուկայում բարենպաստ պայմանների և ներմուծման ծավալների աճի որոշակի զսպման պայմաններում: Միևնույն ժամանակ, սակայն, ՌԴ ԿԲ տվյալներով, մասնավոր հատվածի կողմից երկրից դուրս բերվող կապիտալի ծավալը կազմել է 23.8 մլրդ ԱՄՆ դոլար՝ 2016թ հունվար-հոկտեմբերին ցուցանիշի ընդամենը 8.6 մլրդ դոլարի հասնող արժեքի հետ համեմատած: Կապիտալի արտահոսքի նման աճին նպաստող հիմնական սուբյեկտներն առևտրային բանկերն են, որոնք գումարներն ուղղում են արտաքին պարտավորությունների մարմանը: Ընդ որում, արտաքին պարտքի գծով վճարումների առավել ակտիվ շրջան է սպասվում դեկտեմբերին:

Իրադրությունն էլ ավելի է վատթարացնում ռուսական շուկայից օտարերկրյա ներդրողների կողմից կապիտալի դուրսբերումը: Ոչ ռեզիդենտների շրջանում մտահոգությունների պատճառ են հանդիսացել ՌԴ-ում արտարժույթով գործառնությունների նկատմամբ սահմանափակումներ մտցնելու հավանականության վերաբերյալ հաղորդագրությունների տարածումը (որոնք, սակայն չափազանցված էին և հերքվել են ՌԴ Ֆինանսների նախարարության կողմից) ու ԱՄՆ կողմից ՌԴ պետական պարտատոմսերում նեղրումներ կատարելու արգելք սահմանող նոր պատժամիջոցների կիրառման վտանգը: Ակնկալվում է, որ վերջինս ուժի մեջ կմտնի 2018թ սկզբից:

Միևնույն ժամանակ, ՌԴ ԿԲ-ն կտրուկ ավելացրել է իր արտաքին պարտավորությունների ծավալը: ԿԲ արտաքին պարտքի ցուցանիշն աճել է երրորդ քառորդն անընդմեջ՝ տարվա սկզբին առկա 12.3 մլրդ ԱՄՆ դոլարից հոկտեմբերին հասնելով 22.4 մլրդ դոլարի՝ ավելանալով ավելի քան 9.9 մլրդ դոլարով: Նման բարձր տեմպերով աճ է գրանցվել միայն 2009թ ճգնաժամային տարում (11.8 մլրդ դոլար): Արտարժույթային իրացվելիության պակասի նշաններ երկրում սկսել են զգացվել դեռևս ընթացիկ տարվա սեպտեմբերից, երբ արտարժույթային վարկերի տոկոսադրույքները երկրում կտրուկ աճ գրանցեցին (օրինակ՝ ֆիզիկական անձանց տրամադրվող մինչև 1 տարի ժամկետայնությամբ արտարժույթային վարկերի միջին տոկոսադրույքը սեպտեմբերյան 6.93%-ից

հոկտեմբերին աճեց մինչև 9.70%), իսկ մի շարք բանկեր սկսեցին ԿԲ-ից սվոփ գործարքների միջոցով արտարժույթ ներգրավել:

Մեկ այլ գործոն, որը զսպող ազդեցություն գործեց նաև Ֆինանսների նախարարության հաղորդագրությունն այն մասին, որ նոյեմբեր ամսից իրականացվելու են արժույթային ինտերվենցիաներ. արտարժույթի առքի օրական ծավալները լինելու են համարժեք 5.8 մլրդ ռուբլու, իսկ ամսական ընդհանուր ծավալը կազմելու է 122.8 մլրդ ռուբլի: Ակնկալվում է, որ դաշնային բյուջեի նավթագազային եկամուտների շեղումն ամսական գնահատականից նոյեմբերին կկազմի 125.8 մլրդ ռուբլի՝ աճի ուղղությամբ:

Այս ֆոնին ԱՄՆ դոլարի նկատմամբ ռուբլու փոխարժեքը հոկտեմբերի սկզբից մինչ նոյեմբերի առաջին օրերը ներառյալ նվազեց 2.7%-ով՝ 57.68 ռուբլի դոլարի դիմաց արժեքից հասնելով 59.25 ռուբլի դոլարի դիմաց արժեքին:



Ապրանքային շուկա


Նավթի շուկա: Brent տեսակի նավթի գներն 2017թ. հունվար-հոկտեմբեր ժամանակահատվածում արդեն գրանցել են մոտ 8% աճ այն դեպքում, երբ հունվար-հունիս ժամանակահատվածում նվազել էին ավելի քան 15.6%-ով: Տարվա երկրորդ կիսամյակի ընթացքում նավթի գնի անկում է գրանցվել միայն օգոստոսին՝ -0.51%, իսկ հուլիս, սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսներին գրանցվել է համապատասխանաբար 9.87%, 9.85% և 6.66% աճ: Հոկտեմբերի 27-ին նավթի համաշխարհային շուկայում բարելի գինը հատեց 60 ԱՄՆ դոլարի սահմանը՝ գերազանցելով վերջին ավելի քան երկու տարիների ընթացքում գրանցած առավելագույն արժեքները: Նման դինամիկայի պատճառը Սաուդյան Արաբիայի և Ռուսաստանի կողմից նավթի արդյունահանման ծավալների կրճատմանն ուղղված համաձայնագրի ժամկետի երակածգմանն աջակցելու հետ կապված սպասումների աճն էր:

Նոյեմբերի 30-ին կայանալիք ՕՊԵԿ-ի նիստից առաջ Սաուդյան Արաբիայի գահաժառանգ Մ.Սալմանը նշել է, որ կողմնակից է համաձայնագրի ևս ինն ամսով երկարաձգմանը՝ հաջորդելով ՌԴ նախագահի կողմից կատարված նմանատիպ ակնարկներին:



Նավթի շուկայում գների աճին է նպաստում նաև Իրաքյան Մոսուլի տարածքում պահպանվող լարված ռազմաքաղաքական իրադրությունը:

Հիշեցնենք, որ ՕՊԵԿ-ի և ևս 11 նավթ արդյունահանող երկրների կողմից նավթի արդյունահանման օրական ծավալները 1.8մլն բարելով կրճատելուն ուղղված համաձայնագրի (2016թ դեկտեմբեր, Վիեննա) ժամկետն 2017թ մայիսին երկարաձգվեց 9 ամսով՝ մինչ 2018թ մարտ ամիսը՝ կրճատելու համար նավթի համաշխարհային պաշարները: Իհետև քննարկումները մասնակից երկրների միջև տեղի կունենան նոյեմբերի 30-ին:



ԱՄՆ EIA Էներգետիկ տեղեկատվական կենտրոնի կողմից հրապարակված տվյալների համաձայն հոկտեմբեր ամսվա ընթացքում ԱՄՆ նավթային պաշարները նվազել են 3 շաբաթ անընդմեջ. 0.8 մլն բարելով աճ է գրանցվել միայն ամսվա վերջին շաբաթվա ընթացքում:

Ոսկու շուկա: Հոկտեմբեր ամսվա առաջին տասնօրյակում ոսկու շուկայում

գրանցված շուրջ 2.6% աճին՝ 1270.52 ԱՄՆ դոլարից մինչև 1303.39 ԱՄՆ դոլար ունցիայի դիմաց, ամսվա երկրորդ կեսից հաջորդեց նույնքան անկում: Ամսվա սկզբին գրանցված աճը խթանվեց տարբեր տարածաշրջաններում գեոքաղաքական լարվածության՝ Հյուսիսային Կորեայի և ԱՄՆ միջև քաղաքական լարվածության որոշակի սրացման, Իրաքյան Քուրդիստանի տարածքում բախումների և Կատալոնիայի՝ Իսպանիայից անկախացման համար մղվող պայքարի ֆոնին, այնպես էլ ԱՄՆ դոլարի՝ այլ հիմնական արժույթների նկատմամբ փոխարժեքի որոշակի թուլացմամբ:

Ամսվա երկրորդ կեսից ԱՄՆ դոլարի դիրքերի կտրուկ բարելավման ֆոնին ոսկու գների գրանցած անկմանն ամսվա վերջին օրերին հաջորդեց գների որոշակի կայունացում:

Ոսկու համաշխարհային խորհրդի տվյալներով 2017թ. 3-րդ եռամսյակի ընթացքում գրանցվել է ոսկու նկատմամբ համաշխարհային պահանջարկի մոտ 9% տարեկան (YoY) անկում՝ մինչև 915 տոննա: Համաշխարհային առաջարկը նույն ժամանակահատվածում նվազել է 2%-ով՝ մինչև 1,146.4 տոննա:

